ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 31

«11» 04 2018 թ. ք. Երևան

ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻՆ, ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆՆ ՕԺԱՆԴԱԿՈՂ ԱՆՁԱՆՑ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԽՐԱԽՈՒՍԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 19-Ի N 36 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դատախազներին, դատախազության գործունեությանն օժանդակող անձանց խրախուսման ներկայացնելու և խրախուսելու կարգը հստակեցնելու և դրա հետ կապված հարաբերություններն օրենսդրությանը համապատասխան կանոնակարգելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, 52-րդ հոդվածով՝

Հրամայում եմ՝

1. Սահմանել դատախազներին, դատախազության գործունեությանն օժանդակող անձանց խրախուսման ներկայացնելու և խրախուսելու կարգը՝ համաձայն հավելվածի (կցվում է):

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2015 թվականի հունիսի 19-ի «Դատախազին խրախուսման ներկայացնելու կարգը սահմանելու, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2007 թվականի մայիսի 31-ի N 25 և դեկտեմբերի 21-ի N 86 հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 36-ի հրամանը:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերցնում եմ ինձ վրա:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական

դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին և օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
գլխավոր դատախազի
2018 թվականի ապրիլի 11-ի
թիվ «31» հրամանի

ԿԱՐԳ
ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻՆ, ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ ՕԺԱՆԴԱԿՈՂ ԱՆՁԱՆՑ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԽՐԱԽՈՒՍԵԼՈՒ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են դատախազին խրախուսման, պետական պարգևների ներկայացնելու, դատախազության վետերաններին և դատախազության գործունեությանն օժանդակող անձանց խրախուսելու կարգը:

2. Երկարամյա ծառայության (պաշտոնավարման) կամ պաշտոնեական պարտականությունները կամ հատուկ առաջադրանքները գերազանց կատարելու համար դատախազի նկատմամբ կարող են կիրառվել «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 52-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված խրախուսման տեսակները:

3. Սույն կարգի 1-ին կետում նշված անձինք կարող են խրախուսվել նաև ծննդյան և աշխատանքային հոբելյանական տարեդարձների, ինչպես նաև մասնագիտական և այլ տոների առթիվ:

4. Օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով դատախազը կարող է ներկայացվել պետական (կառավարական), ինչպես նաև այլ պարգևների:

5. Դատախազի խրախուսումը հիմնվում է օրինականության, հավասարության, անկողմնակալության, անհատականացման սկզբունքների վրա:

6. Միևնույն դատախազի նկատմամբ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի (այսուհետ՝ գլխավոր դատախազ) կողմից միաժամանակ կարող է կիրառվել խրախուսանքի մի քանի միջոց:

7. Կարգապահական տույժ ունեցող դատախազի նկատմամբ, սույն կարգի 2-րդ մասով նախատեսված դեպքերում, որպես խրախուսանք կարող է կիրառվել միայն նախկինում նշանակված կարգապահական տույժը ժամկետից շուտ հանելը:

II. ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ (ԱՌԱՋԱՐԿ) ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

8. Դատախազներին խրախուսում է գլխավոր դատախազը՝ իր նախաձեռնությամբ կամ սույն կարգով սահմանված անձանց միջնորդության (առաջարկի) հիման վրա:

Դատախազին խրախուսելու վերաբերյալ միջնորդություն (առաջարկ) գլխավոր դատախազին ներկայացնելու իրավունք ունեն՝

1) գլխավոր դատախազի տեղակալը՝ իր համակարգման ոլորտում գտնվող դատախազներին խրախուսելու համար,

2) զինվորական դատախազը՝ զինվորական կենտրոնական դատախազության դատախազներին, կայազորների զինվորական դատախազության դատախազներին խրախուսելու համար,

3) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության և զինվորական կենտրոնական դատախազության կառուցվածքային ստորաբաժանման (այսուհետ կառուցվածքային ստորաբաժանում) ղեկավարը՝ տվյալ ստորաբաժանման դատախազներին խրախուսելու համար,

4) Երևան քաղաքի դատախազը՝ Երևան քաղաքի դատախազության և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազությունների դատախազներին խրախուսելու համար,

5) Երևան քաղաքի վարչական շրջանի դատախազը՝ տվյալ վարչական շրջանի դատախազության դատախազներին խրախուսելու համար,

6) մարզի դատախազը՝ տվյալ մարզի դատախազության դատախազներին խրախուսելու համար,

7) կայազորի զինվորական դատախազը՝ կայազորի զինվորական դատախազության դատախազներին խրախուսելու համար:

9. Սույն կարգի 8-րդ կետով սահմանված միջնորդություններն ինքնին դատախազներին խրախուսելու հիմք չեն:

10. Սույն կարգի 8-րդ կետով սահմանված միջնորդությունները պետք է լինեն պատճառաբանված:

11. Գլխավոր դատախազը, նրա տեղակալները, կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարները, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների, մարզերի դատախազները և կայազորների զինվորական դատախազները, իրենց իրավասության սահմաններում, պարտավոր են միջոցներ ձեռնարկել պաշտոնեական պարտականությունները կամ հատուկ առաջադրանքները գերազանց կատարած, պաշտոնեական պարտականությունների կատարման արդյունքում աշխատանքային հաջողություններ արձանագրած, կամ իրենց առջև դրված խնդիրների լուծման հարցում գերազանց արդյունքների հասած, ինչպես նաև սույն կարգի 2-րդ կետերում նշված այլ դեպքերում, իրենց ենթակա դատախազին խրախուսման ներկայացնելու ուղղությամբ:

12. Գլխավոր դատախազի տեղակալի խրախուսման հարցը, ըստ իրավասության սահմանների, որոշում է գլխավոր դատախազը:

13. Դատախազին պետական պարգևներով պարգևատրելու կամ պատվավոր կոչումներ շնորհելու վերաբերյալ միջնորդությամբ Հայաստանի Հանրապետության Նախագահին դիմելու առաջարկով Հայաստանի Հանրապետության վարչապետին ներկայացնում է գլխավոր դատախազը:

14. Գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների, ավագ դատախազների, Երևան քաղաքի դատախազի, Երևան քաղաքի վարչական շրջանների, մարզերի և կայազորների զինվորական դատախազների, Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազի տեղակալների, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժնի պետերի և ավագ դատախազների խրախուսման հարցը որոշվում է գլխավոր դատախազի կողմից՝ անմիջականորեն կամ ոլորտը համակարգող նրա տեղակալների ներկայացրած միջնորդության հիման վրա:

15. Զինվորական դատախազի տեղակալը իր համակարգման ոլորտում գտնվող դատախազին խրախուսելու վերաբերյալ կարող է առաջարկություն ներկայացնել

զինվորական դատախազին, որն այն քննարկելուց հետո համապատասխան միջնորդություն կարող է ներկայացնել գլխավոր դատախազին:

16. Գլխավոր դատախազի հրամանով կազմված աշխատանքային խմբերում, հանձնախմբերում, հանձնաժողովներում ընդգրկված դատախազներին կատարած համապատասխան աշխատանքի համար խրախուսելու պատճառաբանված միջնորդությունը Գլխավոր դատախազին է ներկայացնում աշխատանքային խմբի (հանձնախմբի) ղեկավարը:

III. ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

17. Դատախազների նկատմամբ կիրառվում են օրենքի 52-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասով սահմանված խրախուսման միջոցները:

18. Օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված «շնորհակալություն» խրախուսման միջոցը արտահայտվում է գլխավոր դատախազի կողմից հաստատված ձևի շնորհակալագրով՝ և (կամ) «Հայաստանի Հանրապետության դատախազություն» կրծքանշանով:

19. Օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված հուշանվերով պարգևատրումը կարող է արտահայտվել նաև համապատասխան հոբելյանական մեդալով, «Համագործակցության ամրապնդման համար» կամ «Իրավակարգի ամրապնդման համար» մեդալներով:

20. Օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված «Դատախազության պատվավոր աշխատող» կոչումը շնորհվում և համապատասխան կրծքանշանով պարգևատրվում են միայն դատախազի (դատախազության քննիչի) առնվազն 15 տարվա ստաժ ունեցող դատախազները, իսկ բացառիկ դեպքերում նաև՝ դատախազության համակարգում առնվազն 20 տարի աշխատանքային ստաժ ունեցող դատախազության համակարգի աշխատակիցները:

21. Սույն կարգով սահմանված համապատասխան հոբելյանական և «Իրավակարգի ամրապնդման համար» մեդալներով կարող են խրախուսվել նաև դատախազության աշխատակազմի աշխատակիցները և դատախազությունում հայեցողական պաշտոն զբաղեցնող անձինք:

IV. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻՆ, ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻՆ ԵՎ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆՆ ՕԺԱՆԴԱԿՈՂ ԱՆՁԱՆՑ ԽՐԱԽՈՒՍԵԼՈՒ ԿԱՐԳԸ

22. Հայաստանի Հանրապետության դատախազության ստորաբաժանումներին, դատախազության վետերաններին և դատախազության գործունեությանն օժանդակող անձանց խրախուսելու հարցը որոշում է գլխավոր դատախազը՝ իր նախաձեռնությամբ կամ սույն կարգի 8-րդ կետով սահմանված անձանց պատճառաբանված միջնորդության հիման վրա:

23. Դատախազության վետերաններ են համարվում՝ դատախազությունից օրենքով սահմանված կարգով կենսաթոշակի իրավունք ստացած նախկին դատախազները:

24. Որպես դատախազությանն օժանդակող անձինք կարող են խրախուսվել պետական այլ կամ տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև կազմակերպությունների, զանգվածային լրատվության միջոցների աշխատակիցները, այլ

պետությունների դատախազությունների աշխատակիցները, դատախազության հետ համագործակցող օտարերկրյա կազմակերպությունների աշխատակիցները:

25. Սույն կարգի 21-րդ կետով սահմանված անձինք կարող են խրախուսվել «շնորհակալություն» և (կամ) «դրամական կամ հուշանվերով պարգևատրում» իսկ դատախազության վետերանները՝ նաև «Դատախազության պատվավոր աշխատող» կոչման շնորհում և համապատասխան կրծքանշանով պարգևատրում խրախուսման միջոցներով: Հայաստանի Հանրապետության դատախազության ստորաբաժանումները կարող են խրախուսվել «շնորհակալություն» խրախուսման միջոցով, որն արտահայտվում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի կողմից հաստատված ձևի շնորհակալագրով:

V. ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻՆ ԽՐԱԽՈՒՍԵԼԸ

26. Պետական այլ կամ տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների կողմից, ինչպես նաև այլ պետությունների դատախազությունների կողմից դատախազին խրախուսելու հարցը որոշվում է գլխավոր դատախազի համաձայնությամբ կամ ներկայացմամբ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

VI. ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

27. Գլխավոր դատախազը խրախուսելու վերաբերյալ միջնորդության և դրան կից փաստաթղթերի քննարկման արդյունքներով ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) մերժել միջնորդությունը կամ.

2) բավարարել միջնորդությունը կամ.

3) բավարարել միջնորդությունը՝ վերանայելով խրախուսման տեսակը:

28. Սույն կարգի 26-րդ կետով սահմանված որոշման կայացման համապատասխան մակագրությամբ գլխավոր դատախազը միջնորդությունն ուղարկում է Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժին՝ գլխավոր դատախազի հանձնարարությունը կատարելու համար:

VII. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

29. «Հայաստանի Հանրապետության դատախազություն» կրծքանշանի, «Դատախազության պատվավոր աշխատող» կրծքանշանի, «Իրավակարգի ամրապնդման համար» և «Համագործակցության ամրապնդման համար» մեդալների նկարագրությունը, խրախուսման ներկայացնելու միջնորդության և համապատասխան վկայականների ձևերը հաստատվում են գլխավոր դատախազի հրամանով:

30. Հոբելյանական մեդալների նկարագրությունը և վկայականի ձևը յուրաքանչյուր հոբելյանական տարի հաստատվում է գլխավոր դատախազի հրամանով:

31. Դատախազի նկատմամբ գլխավոր դատախազի կողմից կիրառվող խրախուսանքը ձևակերպվում է գլխավոր դատախազի հրամանով, իսկ սույն կարգի 6-րդ գլխով նախատեսված դեպքերում՝ համապատասխան մարմինների ակտերով:

32. Սույն կարգի 30-րդ կետով սահմանված հրամանները հաշվառվում են դատախազի անձնական գործում:

33. Խրախուսման միջոցները հանձնում է գլխավոր դատախազը կամ նրա հանձնարարությամբ՝ իր տեղակալներից մեկը:

34. Գլխավոր դատախազի հրամանով պարգևատրված Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմի աշխատակիցներին գլխավոր դատախազի հանձնարարությամբ խրախուսման միջոցները կարող է հանձնել Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարը: